

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2017թ. թիվ _____/Ա/

ՎԱՀԵ ԳԵՎՈՐԳԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ
ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան
Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Մինչև 2017 թվականի ամառային զորակոչը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ
տարկետում՝ Վահե Գևորգի Սահակյանին (ծնվ. 03.10.1997թ., ք. Երևան, Նորք 5-րդ փողոց, տուն 1,
սովորում է Երևանի Թաթուլ Կրպեյանի անվան թիվ 62 ավագ դպրոցի 12-րդ դասարանում):

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

Վահե Գևորգի Սահակյանը սովորում է «Երևանի Թաթուլ Կրպեյանի անվան թիվ 62 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 12-րդ դասարանում: 2016թ. հոկտեմբերի 3-ին լրացել է նրա 19 տարին: 2005թ. ընտանիքով մեկնել են Ռուսաստանի Դաշնություն և առաջին դասարան Վահե Սահակյանը գնացել է 8 տարեկանում: Հայաստան վերադառնալով ուսումը շարունակել է թիվ 62 դպրոցում: Ուսումնառությունը ավարտելու է 2017թ. հունիսին:

Ելնելով վերոշարադրյալից՝ նպատակահարմար եմ գտնում Վահե Գևորգի Սահակյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում մինչև 2017 թվականի ամառային զորակոչը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը
1	ՀՀ պաշտպանության նախարարություն 09.12.2016թ N ՊՆ/510-168	«Վահե Գևորգի Սահակյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:	առարկություններ չկան
2.	ՀՀ արդարադատության նախարարություն 17.02.2017թ. N 01/14/2297-17	«Վահե Գևորգի Սահակյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:	նախագիծը համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը
3.	ՀՀ նախագահի աշխատակազմ 15.02.2017թ. Ղ343	«Վահե Գևորգի Սահակյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:	դիտողություն չունեն